Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԳԻՐՔ № 365.

ԳԶՐՈՑ № 31.

Մ. Ն. Շ. ԳՐԱԴԱՐԱՆ
Համար 1785

[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] 1832 [illegible]

368
31



№ 1785

Ս. Ն. Շ. ԳՐԱԴԱՐԱՆ
Համար 1785

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
## ԱՆՑԻՑ

Սրբայկրոն Տն Յակոբ Արքեպիսկոպոս · Առաջնորդին · Նորջուղայու Հայոց Եւ խորհրդատուութիւն մադրասիս բնակող Հայոց ։

՚ի Հայրապետութեան Տն Ղուկասու Սրբազան Հայրապետի ամենայն Հայոց ՚ի Վաղարշապատ ։

Եւ ՚ի Յառաջնորդութեանն Նոր Ջուղայու Տն Յակոբայ Արք Եպիսկոպոսի ։

Եւ ՚ի Թագաւորութեան Օգոստափառ Տն Երկրորդի Հերակլայ Արքայի ՚ի Թիֆլիզ ։

Յամի տեառն փրկչին մերոյ քրիստոսի 1793
Եւ ի թվին թվականութեան Հայոց 1242

՚ի Հնդիկս մայրաքաղաքն Մադրաս ։

՚ի Տպարանի Տն Յարութիւնի Շմաւոնեան Շիրազցւոյ ։

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ս. Ամենափրկիչ Վանք
Նոր Ջուղա

Ա

Օրհնողն Գրեցելոյ պատուիրակէ Հանդէպ Սուլթանումեան .
Որում պատասխանէ ՚ի նոր ջուղայոյ բնակեալ հայոց :

Սրբայկրօն տն Միքայէլ Վարդապետ Տեղա-
կալ Առաջնորդութեանն Նոր Ջուղայու
Հայոց : Նաև Նորին Սրբակրօնք Միաբանից :

Ձեր հրամանոց Շնորհեցեալ թուղթք Օրհնութեանց և յատկապէս սիրոյ առ հասարակութիւնն Մադրասիս Հայոց, և հատկապէս առ մեզ փոքրկանցս ըստացս, այն որ առ հասարակութիւններ հանձնեցի Սրբակրօն տր Յարութիւն Շմաւօն տեղակալ Աւագ քահանային Մադրասիս հայոց, որ ընթերցեալ եղև ՚ի մէջ մադրասիս բնակողք հասարակ հայոց, և ամենայն գրեցեալքն ձեր ամենեքեան լուան և տխրեցան ՚ի վերայ անցից զոր անցին ՚ի վերայ ձեր, որ իրաւէ տխրելի եղև մեզ և ամենեցուն յոյժ :

Որովհետև որ Սրբայկրօն տն Յակոբ Արքեպիսկոպոսն միջոց երկայն ժամանակաւ ոչ Ջուղայու ոչ Պասրունց, և ոչ նորա Սուրաթն գնալէն յետ Սուրաթինցն ոչ ինչքն, և ոչ Պասրու և Սուրաթին բնակեալք հայոց ժողո-

վու

վուրդքն ոչ եպիսկոպոսին Ջուղայու ելանելէ պատճառն, և յետ նորա ելանելոյն ոչ իւր-եանց մտածութիւնն մինչև ցայսօր մեզ գրել չեն, և մեք բնաւ 'ի գրուածոյ ձերոց միւս կողմին, և կամ ես Հնդստանայ բնակողաց մտածութիւնն 'ի վերայ բանիս ոչ գիտեմք, վասն որոյ ոչ՛ կարելի մեզ յեզնակ լինիլ որ մին մտածութեամբ, քանզի գործս վերաբերէ առ Հասարակութիւնն ժողովրդոց, վասն որոյ փոքր գրով ձեզ ազգ. ալարի ձերոց գրեանքն մեր ստանալն, մինչ այսու յետ հուջակեցի հաճառաւոր պատճառն անցից յիշեալ Եպիսկոպոսին, զոր ինչ Հասարակութեան կամք լինի առաջադրելոյ 'ի հարկէ ձերոց սրբութեանցն գրելոյն ։

Եթէ ձեզ կամք լինիցի խնայե-ցէք մերոց պանդխտութեանց, 'ի այս մտածուն, որ մեք ոչ միայն կողոպտեցեալ եմք 'ի Ջուղայ 'ի բռնաւորացէ բարբարոսաց, այլև թողեալ եմք զտունս, զայգեստան, զգեօղ, և զամենայն կե-անս որ ունէաք անդ, միմեայն զերծուցաք թափուր զանձինս մեր, և հանձն առաք կենալ աստ տոչորմամբ, եթէ 'ի տապոյ արևոյն և եթէ 'ի կարօտութենէ մերոց Պաշտելեաց և Պատուէլեաց սիրոյն, և փափակեալ 'ի մերոց բնիկ կերակրոց և առողջարար օդոյն և այլն, այս ոչ համարիք բաւական մեզ՝ դեռևս ցանկայք զի 'ի այս տոչորելէ կացութեամբ

մե

ձերով. եթէ հնար ինչ լինիցի, այլև ընկալնուլ 'ի մէջ զոր ինչ արդիւնք զի տայք այդ անագանելի բարբարոսաց, որ քաղցն և ագահութիւնն դոցա ոչ ոք իրօքէ լնանիլոց. եթէ ոչ դժոխային մոլորօք, որովհետև հանեալն 'ի մէնջ ոչէ՛ ճնալոց վասն ձեր և վասն մխիթարութեանն սրտի ձերոյ, ուրեմն մի լինիք պատճառ և մի յորդորէք զի մեք տրգիտութեամբ լինիցիմք պատճառ ինչս մեր մտանելոյ 'ի քաւկս դոցա, և առաւելանալոյ զնեղութիւնս ձեր 'ի գոցանէ, վասն զի դուք եթէ 'ի տարր յաշխարհէ ստանայք մի՛ դուքա 'ի ձէնջ պահանջելոյեն տասն ։

Ցաւել քան զայս ոչ ունիմ այժմիկս այլ ինչ ասելոյ եթէ ոչ որպէս 'ի վերն ասացի, զի յետ հաստատելոյ զպատճառն 'ի վերն գրեցեալ անցից, համարակութեամբ, զոր ինչ առաջադրութիւնն որ լինիցի գրելոցեմ ձեզ, և ես ցանկամ բոլորով սրտիւ զի տէր մխիթարեսցէ զթշուառացեալ կեանս ձեր ։

Մադրասու համիրոյ . . . 5 ։
Թուին . . . . . ։1792։

Ձեր Հրամանաց Հնազանդ
Ծառայ Շահմիր Սուլթանումեան ։

## Բ

Ողբերգոն առ Ցարուհին Ռուսաց, փեշակաւ Ամենայ Քահանայից Համբերելոյ Տէր Քահանայից Մադրասու Հայոց:

Աշխարհագրութիւն Պարսից ընդ հատուածն 'ի Մադրասոյ Քահանայից, Յակոբէն Հայոց:

Խրիմեանց Լեւոնդ:

Քանզի 'ի ձեռանէ, Պատուելի Համիր Սուլթանումի' յանձնեցեալ գիր մի, 'ի Թուրէն 1791 Յուլիսի ամսոյ 23 'ի դրանէ աթոռոյ Սրբոյ, Յօսեփայ Յարիմաթայու, որ 'ի Նոր Ջուղայ, կնքեցեալ 'ի Յանուն բազում կրօնաւորաց, Քահանայից, և հասարակք ժողովրդոց' 'ի նոյնոյ Ջուղայու, առ հասարակութիւնն Ազգիս Հայոց, նոցա որք բնակեցեալք են 'ի Հնդիկս, վասն դըրդման 'ի նոյն Աթոռոյն և եկամուտն անտի, Սրբայկրօն տեառն Յակոբ Արք եպիսկոպոսին, և այլն:

Որում ընծայեցաք' 'ի յատեան ձեր, նշանաւորեալ Ա:

Այս գրուածքս' պատճառն անշարժծալոյ մինչև ցայսօր լուաք նոյն Պատուելի Համիր Սուլթանումէ' զի մինչ տեսցուք կատարածն բանիս զինչ լինելոյ · և այնու յետ' յիշեալ Եպիսկոպոսն, հասեալ 'ի Բասրայ · և այժմս լուաք զի Բասրայու ելեալ և հասեալէ 'ի Բումբայի · Արովհետև, նորին ընթացքն,

այն

այնքան շտապէ՝ ուրեմն տայ մեզ տեղի մտածելոյ, զի կարելի՝ ժամանիլ նորա՝ 'ի միջոց փոքր աւուրց 'ի Մադրաս :

Վասն որոյ՝ յարկն, որ 'ի վերայ մեր կայ՝ պատրաստ լինիլ յամենայն ժամ, առ'ի նմ գործս, որ և մեք, որ ոչ 'ի ձէնջ, և ինչ անուանեալ նշանակ գրքուկին ենթ կարգադրութեան ոչ ունիմք, ոչ ինչ պատճէր վ̃ կառավարելոյ և հոգալոյ, յայսպիսի իրաց. վ̃յ հարկաւոր համարեցաք, իսկոյն հրաժարել՝ 'ի ժողով ընդհանրական :

Իճ արդ՝ ցանկամք, ընտանալ 'ի ձէնջ, զպատուէր, վասն ներքոյ հարցմանցն մերոց. Այսինքն, եթէ ասացեալ Եպիսկոպոսն գոյ Մադրաս որով կերպ պատուովք իջուցանել պարտիմք նմա. և յորում տեղի բնակեցուցանել. և յումմէ լինիցի զծախսն նորին և այլ : Իճ այսպէս կալով Ձ̃ամք պատրաստ կատարելոյ զհրամանն ձեր. որում Շնորհէք մեզ, ձերոց ձեռնադրեալ :

Մադրաստում Սեպտեմբերի 3 :
Յամի Տ̃ն փրկչին մերոյ 1792

Ձերոց հաւատարիմ պաշտօնատարք
Աղայ Նազար Յակոբջան Շամիրեան :
Սահակ Աբրամեան :
Աղայ Սէթ Սամեան :
Կառավարիչք ազգիս Մադրասու Հայոց :

## Դ

### Օրինակ գրոյն Յասարակութեանն Մադրասու Հայոց առ կառավարիչքն Մադրասու Հայոց ՚ի յամսեանն Սեպտեմբերի 3 Թուին 1792։

Գերապատիւ Իշխանք
Նազար Յակոբջան Շամիրեան։
իՍհակ Աբրահամեան։
Սէթ Սամեան։
Կառավարիչք Որբոց Մադրասիս Հայոց։

Ձերոց Սեպտեմբեր 3 թուաւ Իշխ՟ ՚ի յամի 1792 թվէն, գրածներն ընթերցաւ առաջի ատենի երեսուն երկու երրորդ ժողովի ժողովեալ խմբից. որ յարցուցիք վասն գալստեան Սրբակրօն Տ՟ն Յակոբ Արք եպիսկոպոսի ՚ի քումբայի եթէ գուցէ զի նա գայցէ Մադրասս որում կերպի սպասաւորիլ նմա և այլն վասն քանիտ այտորիկ տամք ձեզ պատասխանի։

Յաջոյ թուեցաւ մեզ ժողովեալ դասս քահանայից և յասարակ ժողովրդոց զի եթէ գուցէ որ իւեր յիշեցեալ եպիսկոպոսն միջոց փոքր օրուց և կամ թէ յառաջքան զմեր յիմանալն պատճառն նորին գալստեան նա ժամանեսցի ՚ի Մադրասս յոգացէք վասն նորայ միակօմեդ ալըօն չէնկ մին քահանայ և մին կամ կղերիկոս մին սպասաւորով յողորկեցէք քօրդն, նմայ իջուցէք արեւելէ կոյս Տ՟բ եկեղեցւոյն մերոյ

և

և անդ պատրաստի պահեցէք Զ փալլաքի որ
եպիսկոպոսին և քահանային բերեն ի դրունս
Սբ եկեղեցոյ մերոյ և մեք ոչ ունիմք ոչ ոք ար-
գելում եթէ քահանայք մեր նմայ պատուեն ·
զանկ երգութեամբ և մուծանեն սբ եկեղեցին
ըստ սովորութեան իւրեանց · և պատրաստե-
ցէք վասն նորայ և վասն սպասաւորաց նորայ
բնակութիւն ՚ի գաւիթս սբ եկեղեցուն
և արարէք նմա հուր ընկալութիւն ՚ի եօթն օր
ժամանակաւ մինչ յայտնի լինիցի մեզ պատ-
ճառն թողլոյ · նորին վանք և միաբանս իւր
և խաղալ առ հնդիկս և այլն և յետ այնորիկ
պատուիրելոյեմք ձեզ զինչ առնելն և ծախսն
նորին իջուցանելոյն և եօթն աւուր հուր-
ընկալութեան հատուցումն արարէք մնդկէն

որբոց մադրասիս հայոց ։

Իղև մադրասում սեպտեմբերի ամսի 3 ։
Յամի տն փրկչին մերոյ ։ 1792 ։

Ձեր հրամանոց հնազանդք
Տէր Յարութիւն Շահամիրեան ·
Տէր Մանուէլ Տէր Փիլիպպոսեան ·
Տէր Մովսէս Տէր Աղեքսանդրեան ·
Տէր Թադէոս Տէր Անդրէասեան ·
Խօջայ Շամիր Սուլթանումեան ·
Յարութիւն Յակոբեան ·
Յովհաննէս Յարութիւնեան ·
Խօջայ Ջօրէր Յովհաննէսեան ·
Խաչիկ Մէլքոյ ·

Յակոբ Սիմոնեան.
Պետրոս տէր Յովհաննէսեան.
Մարգար Ծատուր Եաղգար.
Ծառայ Յարութիւն Սարգիսեան.
Ծառայ Յովհաննէս Համբեան.
Ոհաննէս Ծատուրեան.
Ծառայ Դաւիթ Եղեգարեան.
Մանուկ Խաչատուրեան.
Խաչիկ Ծատուրեան.
Գրիգոր Յովհաննէս Գուլամիրեան.
Խաչիկ Աղեքսանդրեան.
Ծառայ Յակոբ Յարութիւնեան.
Ծառայ Պետրոս Մանուկեան.
Ծառայ Աւետ Սեթեան.
Ծառայ Խաչատուր Յարութիւնեան.
Ծառայ Յարութիւն Խաչիկեան.
Ծառայ Մարգար Զօրերեան.
Ծառայ Գրիգոր Սեթեան.
Ծառայ Յօհանջան Յովհաննէսեան.
Ծառայ Խաչիկ Ղազարեան.

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. Ամենափրկիչ Վանք
Նոր Ջուղա

Դ

Օրինակ Թղթոյն Յարութիւն Տէր Խաչատուրեանցն [illegible] որբոց Մադրասու Հայոց հրամանաւ կառավարչացն որբոց Հայոց առ Տանուտէրութեանն Մադրասու Հայոց ։

Ազնուամեծարք Պարոնաց Հայոց ՚ի Մադրասոյս բնակողաց Ամենեցուն ։

Խոնարհաբար յայտնեմ ի ձերում Ազնուականութեանդ որ ՚ի սեպտեմբերի ամսոյ երեք թուին 1792 ՚ի յերեսուն և երկու երրորդ ժողովքին մադրասիս հայոց որ սակս՝ ըմպահանն Ջուղայու Առաջնորդ Սրբակրօն Յակոբ վարդապետին առ մադրաս գալոյ աղագաւ Պատուիրեցեալ էիք առ նոյն տարւոյս կառավարչացն որբոց, որ մինչ ասացեալ Առաջնորդն՝ ՚ի մադրաս հասանիցէ նորա ՚ի գաւթի սրբոյ եկեղեցւոյն մադրասիս հայոց բնակեցուսցեն և մինչև ցեօթն աւուրս հիւր ընկալութիւն արասցեն ՚ի նմա, մինչև յայտնի լիցի Ամենեցուն զպատճառն նորին գալստեանն և այլն, և յետ այնորիկ՝ ապա պատուիրելոց լինին կառավարչացն որբոց զինչ առնելն։

Իսկ այժմ մեք տարւոյս կառավարիչքս որբոց՝ ծանուցանեմք առ ձերում ազնուականութեանդ, որ յիշեալ սրբակրօն Առաջ

Առաջնորդին 'ի Մադրասս գալըյն՝ ըստ նոյն ասացեալ ժողովքին պատուիրանացն, արարեցեալ և կատարեցեալեմք, և այժմ յեօթն աւուրն լրեցեալէ, վն որոյ թղթովս ազդ արարաք 'ի ձերում պատուականութե զի շնորհս առնիջիք մեզ որպէս առնելն որ և այնպէս առնիցեմք :

Մադրասումս Յուլիսի 9
և 'ի յամի տն փրկչին մերոյ : 1793
ի Պատկեր աւուրն Շաբաթու

Հրամանաւ Պարոնաց կառավարչաց ուխտից Մադրասու հայոց
ձեռամբ ծառայ Յարութեան Տէր Խաչատուրեան
ուխտից դպիր :

Ի

Օրինակ Թղթոյն Մադրասու Հայոց Երևելի Պարոնաց Գրեցեալըն առ ըՄադրասի ուխտից կառավարչացն Հայոց :

Պատուելեաց Իսահակ Աբրահամեան և :
Սէթ Սամեան :
Տարւոյս կառավարիչք ուխտից Մադրասու Հայոց :

Պարոնայք :

Ուրախութեամբ ընթերցեալեմք զշօշեցուցեալ թուղթն ձեր աստորագրեցեալ
հրա

հրամանաւ ձերոց 'ի Պարոն Ցարութիւն տէր
խաչատուրեան որդւոց Դպրէն թուոյս յուլ֊
իսի 9 : էն յորում ցանկայք ունիլ 'ի մէնջ
կրկին Պատուէր վասն հոգացողութեան ծա֊
խուն Սրբակրօն Տ̄ն Յակոբ Արքեպիսկոպոս
և Առաջնորդին մերոյ, որ այժմյս բնակեալէ
աստ 'ի մադրաս :

Թէ և յետ գալստեան
Նորին Սրբութեան տեսութիւն եմք արա
րեալ նմա, և ըստ սովորութեան քաղաքա֊
ւորութեան հարցմունք առողջութեան անձին
իւրոյ և այլն, այլ որպէս վ̄ հասարակաց
մեք իւրանքանչիւրոք յատուկ անձամբ ոչ ու֊
նիմք բերան խօսելոյ և ոչ ունկն լսելոյ, թէ
և 'ի մէջ հասարակ խօսակցութեանն Նորին,
Սրբութեան, զանազան Պատմութիւնեմք
լուեալ, թէ վ̄ ելանելոյ Նորին 'ի Ջուղայու
և թէ անցին ճանապարհաց և այլն, այլ այստ֊
քիկ միայն և եթ իբր Պատմութիւնք էին,
այլ որովհետև զի 'ի մէջոյ իբր : 190 : ամ
ժամանակօք երբէք ոչէ պատահեալ զի Առա
ջնորդն . Սբ Յօվսէփայ վանին ելանիցէ ի յա֊
թոռէ իւրմէ առ 'ի տարր աշխարհ, յատկա֊
պէս այսքան յեռաստան մինչև ցմադրաս զի
ցուցանէ գործս իբր Նորոգ բան, առանց
ունելոյ մեզ նշանակ վասն որոյ մտածեմք զի
հարկաւորէ նախապէս իմանալ մեր 'ի Նորին
Սրբութենէ զպատճառսն թէ ելանելոյն Նորին

'ի

՚ի Աթոռէն, թէ մինչև ցայսքան յետաձգան գալն, և յետ գալոյն զինչ ցանկութիւն սրտի Պատուականութեան Նորին լինիլն, և կատարածն ուրկամի դադարիլ: Նաև ցանկալի է մեզ լսել հաճոյապատճառ ելթէ զՍրբութեն իւր թեղեալէ Որդ տեղակալ ՚ի յիշեալ վանս Սրբոյն Յով-սեփայ զի աջորդեսցէ ՚ի տեղի Սրբութեն Նորին վն մխիթարութե բնակչացն Նոր Ջուղայու հայոց: Նոյնպէս և արդ Պատուիրեմք ձեզ զի Նախ հոգա-ցէք զօրաւոր ծախքն Նորին Սրբութեն, համ-դերձ սպասաւորաց Նորին, մինչև ՚ի ստացն մեր օգոստոսի ամսոյ 10 իւրաքանչ օր երկս ռուփիս հասնելով տնտես Քահանային վն ծախուց Նոցա մինչև ՚ի առաջի մեր գալոյ ժողովքումն սոսա Նաւլցէք հրամանն թէ տացեալ ծախքն յումմէ ելանէ: Իսկ երկրորդ Պատուիրեմք ձեզ զի ՚ի անդորր ժամանակի ցուցանիցէք զայս գրուածս մեր առ ՚ի ընթերցումն Նորին Սրբութեն, և մերոյ կողմանէ խնդրեցէք ՚ի Նմանէ յայտնել զամ զոր ինչ որ ՚ի վերոյ ցանկացեալ եմք լսել, զի շնորհեսցէ ձեզ համառօտ գրեցելովք, և յայսմ հրաւիրեցէք ժողովք և սպասեցէք պատուիրանին միաբանութեն, թէ զինչ հարկաւոր առնելն:

՚ի Մադրաս Յուլիսի 25.
թվին 1793: Ձեր հրամանաց խոնարհ

Խօջայ Շահամիր Սուլթանեան:
Յարութիւն Յակոբեան:
Յակոբ Պօղոսեան:
Յակոբ Սէթոնեան:

# Ձ

## Օրինակ Թղթոյն Սրբազնոյն տն̃ Յովսէփ Արքեպիսկոպոսի և Առաջնորդին նոր Ջուղայու առ հասարակութիւնն Մադրասու հայոց ։

Ամենազօր յէէն զօրացեալք, և՛ի Շնոր-հաց նորին պերճացեալք, Աշխարհոհ և հաւա-տարիմ իշխանացդ մօրս լուսոյ և հարսին քն̃ Սրբոյ Ամենափրկչի վանիր օրհնեալ զաւա-կացդ, մեծամեծաց և փոքերոց որ 'ի տիրա-խնամ և՛ի յաստուածապահ մադրասիս օրհն-եալ ժողովրդոցդ յայտ լիցի Պատուելի կա-ռավարչօքն ձերովք այսինքն պարոն Սահակ աբրահամեան և պարոն Սէթ Սամուէլ հանդերձ Թղթաւն որ յուլիսի 25 ։ Թուին 1793 ։ էն իբրև հարցումն համառօտ, թէ ինչէն պատ-ճառք իմոյ գալստեանն 'ի յայս, զոր երբեք չէ լեալ երկայն ժամանակօք ։ Յովսէփ Արք… եպս. հնդէ…

Ես և իսկ վկայեմ բայց զպատճառն ասեմ, վն̃ զանազան տարբերմանց ժամանակի, և Թագաւո-րափոխութիւնք, և այլ բազումնեղութիւնքն որ օրաւուր դիզեր 'ի վերայ իմ, և գալուստն իմ Թարց գիտութեան Սրբազան վեհին չէ ։

Իսկ կամիք իմանալ՝ յելանելն իմ 'ի Յաթոռէս, զոր տեղակալ Թողեալեմ Թէ ոչ Որովհետև բռնաբարութիւն բռնաւորաց յարաժամ բարդին, 'ի վերայ Առաջնորդին

խըղ

խղճուկ ճողոպրու՝ բարի համարեցի թողուլ սբ վանն ընդ կառավարութեան հասարակ միաբանից, զի մի՛ գուցէ ՚ի պատճառն տեղակալութեան իմոյ, նեղեսցին նոքա ։

Իսկ վասն ցանկութեան սրտիս, և կամ, որ դադարելոյս աղագաւ ասեմ ։

Նախ՝ փափագ սրտի իմոյ տեսանել վաղնջոց կարօտեալ ժողովրդեանն իմոյ որք բնակեալքեն ՚ի Հնդիկս ։

Երկրորդ՝ ՚ի մէնջ մեծի պարտուցէ ի, երրորդ՝ ամենայնի թափուրէ ի յնչից ․ և ոչ ունէի ծախ մինչ զի յօրն կերակրոյ, և մեծ պատճառ գալստեանս ասեմ, որով հետև չունէի այնպէս կատարեալ ում ՚ի միաբանից, եկի ես՝ որէս անցեալ ժամանակէն անկարգութիւնքն թէ յաղագս պարտուցն որ անկաւ ՚ի վերայ իմ, և կամ թէ այլ զանազան բարեկարգութիւնք հաստատեալ զի այսու հետև մնայցեմք ՚ի խաղաղութեան և յանդորրութեան ։

Իսկ յետ այսու ամենայնի դառնալ ՚ի սուրբ Աթոռն մեր ողորմութեամբն այ և ՚ի դառնալս իմ տեսանելոցեմ եթէ դեռ չևէ խաղաղութեան երկիրս մեր, իպասրայ մնալոցեմ մինչև այ ողորմութեամբն խաղաղութիւն լինիցի, և ապա կերթամ ․ և եթէ մնացից ՚ի պասրայ՝ ոչ եմ թողլոց ընդհատողութիւն թէ սբ տանն և թէ միաբանիցն Զայս ևս յանձնեմ սիրելեաց իմոց մի՛ գուցէ թէ վասն սբ տան

ւ. թէ այլ, և թէ մասունք սրբոց և թէ պի-
տանի գրեանք որոց աղագաւ ալատուղի ինչ
լուեալ իցէք ոչէ այսպէս սիրելեաք իմ։
Արդ՝ հանգուցանելով զբարեգուն միտս ձեր
վասն վերոյ գրեցելոյս ըստ սովորութեան մեր
հարկ ՚ի վերայ իմ կայր. մեծագոյն հոգս տա
նել վասն այսորիկ ընդ ինև քերեալ մեծաւ
ըզգուշութեամբ ՚ի պասրոյ. և անդ ետու ՚ի
պահեստ հասարակ ժողովրդոց. մինչև ցդառ-
նալն իմ աստէն, այնու յետև ևս հոգալոցեմ
որպէս տեսանէք զխուղթն որէ ըստորագրե-
ցեալ պասրու ՚ի ղելոցն և դրեալ ՚ի ներ
թղթոյս։
Նուաստ ողջ լերուք տերամբ Յիսուսի։
Գրեցաւ Մադրասումն Յամի Տն ռ Է ծ ղ Գ
Յուլիսի . . . . . ի Գ ումի։

1793

Է

Օրինակ ծանուցման · 'ի յամսեանն յուլիսի 6 և 'ի թուին 1792 Քաղաքս նշանաւոր արանց ձեռնադրեալ որում, սանի յամսոյս սուրբ նշխարաց սրբոց և այլն ։

Ներքոյ թուոյս մեր Ջուղայու Ս. Ամենափրկչի վանիս Առաջնորդ Սրբազան Յակոբ Վարդապետն, ի յաջողութեամբն 'ի պատրաստ կամէր երթալ առ Հնդիկս; վասն որոյ ընդ իւր բերեալ, սրբոց աջեր և մասունքն, զորս Ս. վանքիս, և զորս ամայի եկեղեցացն որք ժողովեալ էր վասն ապահովութեան, աստէն համախոհութեամբ քաղաքացու եղեալ ժողովրդոյս 'ի պահեստ եթող, մինչ 'ի վերադառնալն իւր 'ի Հնդկաց ծով, առ որ խորհուրդդիր է միակերպ հաստատեցինք մին սրբազանն կնքեալ ետ մեզ և, մինս մեք կնքեալ տուաք սրբազանին, ի հաստատութիւն բանիս։

Իսկ ինչ ինչ՝ գոյն Ս. մասանց այսէ ներքոյ ։

ա Սբ Յովսէփա յարեմաթացւոյ ծծաշօշափ աջն · Է հատ մեծ փոքր երծաթէ խաչեր, և մին մեծ երծաթէ խաչ, Ս. մինասայ, և Ս. Յակոբ մծբնայ հայրապետի մասունքն իմիջի, և մին դանայ ոսկէ մատանի ալն, քուայ և ֆալս զմրութ, տեքայ 'ի վեր Ս. աջոյնեն ;

ա Գաւիկ երծաթէ, զուռթինով, Ս. լուսաւ-

որ

որչէ տասնեակն է, չորեքկուսի մէկ հատ ։
ա Աղլխով կապած, մին դանեայ փայտէ եր-
ուսաղէմաշէնք ձեւաց խաչ, և երկու
դանեայ եպիսկոպոսի վզի երծաթէ խաչ. Միւ
մէջն Ժ մաս կայ, մինն կենաց փայտէն, և
մինն յովհաննու կարապետին, սոքայ սբ վա-
քիննայ ։
ա Երծաթապատ աւետարան մեծ և գրչաւոր
գեւոնդմանեայ սբ զըեվոր և կիրմրասուոր ասեն ։
ա Պստիկ կապոց Ժ դանեայ գեր-
մակ խաչեր սբ ոց մասամբք և
սբ հռիփսիմեայ կուսի մազն ։
ա Պստիկ խաչ սբ յակոբայն Նոյեան
տապնի փայտէն, 'ի մէջին եդեալ ։
ա Մեծ փայտէ քառակուսի խաչ
երծաթապատ և ոսկէ ջրեալ ։
ա Երծաթէ ոսկէջրած մարդակեր-
պութիւն սբ Թաթէոս առա-
քելոյ մասն միջուին . . . .

Ֆուան շինի և մուրա-տէնց եկե-ղե-ցայ ։

ա Պստիկ երծաթէ ղութին
սբ սարգսի մասն միջուին ։
ա Քաղաթով անշէնք մասունք
վկայականն մէջն կայ . .

յովհաննավա-քիննայ ։

ա Երծաթէ քառակուսի Դրքա
կերպ շինած ղութին, սուրբ
գէորգայ անուամբնայ բայց
և այլ մասունք գոն 'ի մէջ
որոց չեմք ծանօթ զինչ գոլն ։

Դա

ա Գտանայ փայտէ արուեստով ծե-
ւոյց խաչ նայև վերըն երծա-
թեայ արուեստիւ գործա-
րեալ, և ակնով զարդարեալ ։ — Պրուտէնց Եկեղեցւոյն նէ

ա Արծաթէ աջ, որ ի հանդիսեայ մասամբն
ն գտանայ երծաթէ խաչ, և ի մատանի վե-
րէն, որ ընծայեալ եկեղեցւոյն է ի կիսա-
տամնայրին ։

ա Արծաթէ շինած մեծ խաչ կենաց փայ-
տէն ի մէջ եդեալ խաչդարեանց ողջ մար-
գարէ յիշատակն է, և սուրբ նշանայի
եկեղեցւոյն է ։

ժդ Վերոյց գումարն է, որ պարոյ իքր 'ի
պահեստի մնայ, մինչ վերադարձումն • սրբա-
զան առաջնորդին և խաղաղութեան երկրին
մերոյ գրեցաւ յամի տն ռ ե ճ ղ է յուլիսի Հ 'ի
պատրոյ ։

Նշխոփ ծառայ Յովհաննէս Բէրբէնեան ։
Նշխոփ ծառայ Վարդան Սարգիսեան ։
Նշխոփ ծառայ Մուշեղ Մանուէլ Սարգիսեան ։
Նշխոփ ծառայ Յարութիւն Ասատրեան ։
Նշխոփ ծառայ Գրիգոր Սեմոնեան ։

Բ

Օրինակ Նամակին, Սրբազան Հայրապետին Հայոց ՚ի ցանկութեան սուրբ Էջմիածնի Թուին Հայոց ՌՄԼԶ ին ։ (1787)

Ե







ՔՐԻՍՏՈՍԻ
Ծառայ Տն Ղուկաս՝
Որդ և Շնորհիւն
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
և ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց Առաքելական Եկեղեցւոյս Քի, նաև՝ Տիեզերական, Լուսաւորչական և Շնորհածաւալի, մեծի և սրբոյ Աթոռոյս ԷՋՄԻԱԾՆԻ ։

Յորմէ ժամանեցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեամբ, նամակ պատասխանութեամբ ։

Հն

Շնորհք Առաքելական․ և Ածային բազմա-
պատիկ օրհնութիւնն, և նախախնամական գը-
թութեան, ՚ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ
մերոց, հարազատ և լուսածնունդ զաւակացդ
Սբյ Աթոռոյս, համայն սիրագումար և ա-
ղաւնեբամ Միաբանիցդ սրբոյ Ամենափրկչի
հրաշազարդ վանից․ Եւ բնաւից հայկազուն՝
Լուսաւորչականն և միաբանադաւանն հաւատացե-
լոցդ ՚ի Քս, որք բնակեալ կայք ՚ի տիրա-
խնամ քաղաքդ Նոր Ջուղայ՝ և ՚ի Շրջակայս
գորին, ՚ի Թէմն և ՚ի վիճակս դոյնոց սբյ վանիցդ։
Յորս կառուցեալ Քսոնէից սբյ Եկեղեցեաց և
Եկեղեցականաց դասուց, համաճարունակ վար-
դապետաց, Պարկեշտասուն Աբեղայից, սր-
բանոցէր Քահանայից, Ուսումնասէր Սարկա-
ւագաց, Պերճապատիւ Իշխանաց, փառա-
զարդ Դօլըճաթաւորաց, փարթամայոց, մե-
ծատանց, Հարազատ և Հաւատարիմ Գանձապե-
տաց և Երիցփոխաց, իմաստնախոհ վաճառա-
կանաց, վայելչագործ Արուեստաւորաց, Ար-
դարավաստակ Հողագործաց, և այլ ամ հասա-
րակ ժողովրդականացդ խմբից, մեծաց և փո-
քերոց․ խնդալ ՚ի տէր։ Ամէն։

Շնորհք ընդ ձեզ, և երկնաւոր խաղաղութի
Յաստուծոյ Հօրէ Ամենակալէ և ՚ի Տէ մերմէ
Յսէ Քսէ և ՚ի սբյ Հոգւոյն կենարարէ, ի-
ջեալ հանգիցէ ՚ի վերայ ձեր, և կեցցէ և բնա-
կեսցէ առ ձեզ, իբրև զյորձանս գետոց, և որ
պէս

պէս զվտակս աղբերաց յորդահոս բղխմամբ և առատապէս ծաւալմամբ հանապազ ։

Ամէն ։

Այլև՛ օրհնեսցէ զձեզ տէր Աստուած մեր, և զոր-դարեալ պայծառասցուսցէ զամենեսեանսդ, հոգով և մարմնով, տամբք և տեղեօք, որդւովք և դստերօք զարմօք և զաւակօք, ազգօք և ընդանեօք սիրելեօք և բարեկամօք, հնչիւք և ապրանօք առիւք և տրօք, ելիւք և մտիւք, և ամենայն իրօք ։ Ամէն ։

Եւ ընդ Աստուածային ամենառատ և շնորհածաւալ օրհնութեանս ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոյ, և լուսածին զաւակացդ սրբոյ և մեծի Աթոռոյս ԷՋՄԻԱԾՆԻ ։

Զի բազմակնիք թուղթն ձեր եհաս առ մեզ. զոր և ընթերցեալ՝ իմացաք զամենայն գրեալսն ՚ի նմա ։

Յորում նախապէս ծանուցեալ էիք զվճարումն կենաց Առաջնորդին ձերոյ ծերացելոյ Մկրտիչ վարդապետին և զմնալն ձեր անտերունջ, և զտառապակրութիւնն ձեր մինչև ցայժմ. որոյ աղգաւ տրտմեալ ցաւեցաք ։

Այլ զայս միայն ունիմք ասել թէ տէր ողորմեսցի, և այցելութիւն արասցէ հոգւոյ նորին ։

Եւ զամենայն կրեալ նեղութիւնսդ ձեր յապաշխա-րանս համարեսցէ, և փրկեսցէ զձեզ ՚ի փոր-ձութեանց և ՚ի տառապանաց, և ապահովա-ցուսցէ և մխիթարեսցէ այսուհետև առատ

ողոր

ողորմութեամբ և բարեգթութեամբն իւրով։
Եւ երկրորդապէս զեկուցեալ էիք զհաճիլն
ձեր ընդ Յաջորդն նորին և ընդ սիրելի և
շնորհածին որդին մեր Յակոբ խոհեմիմաստ
վարդապետն, և զընտրելն ձեր զնա 'ի յԱռաջ-
նորդութիւն ձեր և սրբոյ վանիցդ ձերոց,
շնորհակալելով զմէնջ վասն արգելմանն մերոյ
զդա 'ի Հնդիկս գնալոյ. և բազում թախան-
ձանօք խնդրելով, զի կարգեսցուք և հաստա-
տեսցուք զդա Առաջնորդ ձեզ և սրբոյ վանիցդ։
Առորս սրտադիւր եղաք՝ հաճանելով միաբան
խորհրդեան և բարեմտաբար ընտրողութեան
ձերոց։
Ահա իմասջիք, զի գործք և առնելիք մեծաց
որաց ըստ մեծի մասին 'ի յԱյ տնօրինին. որպէս
և մեր նախահօգաբար ձեռնադրելն զդա եպիս-
կոպոս, և արգելուլն յայդր 'ի սբ վանսն 'ի
յօգնականութիւն Առաջնորդին, ոչ էր առ-
անց տեսչութեանն Այ, որ այժմ 'ի բազմա-
վտանգ միջոցիս 'ի պակասիլ Առաջնորդին ահա
'ի պատրաստի գտանեցաւ յայդր, և ոչ մնացիք
խափան անայցելու։
Եւ քանզի՝ ըստ քաղաքավարական կանոնին,
և ըստ բնութեան օրինաց որ 'ի մէջ հարց և
զաւակաց՝ արժանէ, զի բարի որդին յորժամ 'ի
հօրէ իւրմէ զբարի խնդիրս արասցէ, յայնժամ
և հայրն հարազատ խանդաղատեալ 'ի վերայ
նորա կատարեսցէ զխնդիր նորին, վասն որոյ և

այժմ հոգևոր որդիութիւն ձեր մինչ բարուք
խորհրդով և համակամութեամբ խնդրեցէք
՚ի մէնջ զի զսիրելին և հոգևոր որդին մեր և շնորհ
ընկալ զուծանկդ սրբոյ Աթոռոյս զՏէր Յակոբ
խոհեմազարդ վարդապետդ և զԱրհի Եպիս-
կոպոսդ կարգեսցուք ՚ի յԱռաջնորդութիւն
ձեզ և սրբոյ վանիցդ ձերոց, մեք ևս զիջեալ
յաղաչանս բարեխնդիր որդւոցդ և հայրականած
գթութեամբ քաղցրացեալ առ ձեզ, կատա-
րելով զհայցուածս ձեր ահա այսու օրհնաձիր
նմանակաւ մերով կարգեցաք զդա հոգևոր
Առաջնորդ և հովիւ օրհնեալ հօտիցդ Քի,
և սրբոյ Ամենափրկչի վանիցդ ձերոց, առ ՚ի հո-
վուել զձեզ հոգևոր իշխանութբ, և ծայրն
օրինօք, և աւանդութեք սբյ Եկեղեցւոյ, և կա-
նոնօք հարցն սբց և Թարց ակնառութեց, և ՚ի
բարւոքագոյն կառավարել զսբ վանսդ. և ՚ի շէն
ութեան պահել:

Որոյ աղագաւ և կամեցաք այժմ յղել զպարգևս
ինչ ի թր. շնորհ ՚ի սբյ Աթոռոյս՝ և օրհնութն
՚ի մէնջ, այսինքն՝ զփիլոն՝ մատանի և խալէնչայ,
տակայն՝ պատշաճաւոր բերող ո՞չ գոյր . և հար
կաւորէր կոնդակաց շուտով ժամանել առ
ձեզ . վասնորոյ փութացուցեալ զկոնդակս
կանխաւ առաքեցաք ընդ փայեկիդ ձերոց,
զի միամտիցիք : Իսկ զշնորհաւորական խելայն
մեր՝ Տէր Յովհաննէսն մինչ գայցէ ՚ի Թիֆլիզու,
ընդ նմա յղեսցեմք :

Իսկ արդ՝ որպէս Հայրութիւնս մեր հոգևոր լուեալ աղաչանաց ձերոց և կատարեաց զխնդիրս ձեր, պարտիք և դուք հոգևոր որդիք մեր՝ լսօղք և կատարօղք լինիլ հոգևոր հրամանաց և պատուէրանաց մերոց, որքէն տղայս և մանաւանդ ոչ թէ մերոյ, այլ երանելոյն Պօղոսի՝ որ հրամայէ թէ ունկնդի՛ր լերուք Առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա։

Նախ ուրեմն՝ հարկէ ՚ի վերայ ձեր, որդիական խոնարհութեամբ և հպատակք հնազանդք լինիլ Առաջնորդիդ ձերում և հաւատարիմ զաւակիդ սրբոյ Աթոռոյս և մեր՝ Տէր Յակոբ Աճիմաստ Վարդապետիդ և Արհի Եպիսկոպոսիդ, և գոլ լսօղք՝ և առաւել առնօղք զամ հոգևոր և անմեղսածին հրամանս դորա․ զի որպէս սիրով խնդրեցիք զդա՝ նոյնպէս պարտիք սիրով բազմաւ և իսկականաւ ընդունիլ և պատուել զդա, ըստ արժանոյ սրբոյ կարգին, և ամենայնիւ հանգուցանել զսիրտ դորա, զի խնդութեամբ հովուեսցէ զձեզ՝ և մի՛ յոգւոց հանելով։

Երկրորդ՝ պարտիք դորին սիրելեացն՝ գոլ սիրելիք, և ատելեացն ատելիք, և յամենայն գործս իւր օգնական լինիլ դմա, վասն օգտի սրբոյ վանիցն ձերոց։

Երրորդ՝ որք ՚ի միաբանից՝ ՚ի քահանայից և ՚ի ժողովրդոց հակառակ երևիցի դմա, ՚ի յանդիմանելն իւրում ող ջամիտ վարդապետութեամբ իւրով զստահակսն, ՚ի յուղղելն զհերձուածօղսն

և

և 'ի կշտամբելն զանհնազանդսն օրինացն այ, զի այնպիսին ներհակ քի է՝ և հակառակ մերոց հրամանաց . և իշխանութեանս Պետականի ։ Որ և ոչ անսայ այնպիսին՝ առանց պատժոց ։ Քանզի ունի դա զհրաման և զիշխանութիւն 'ի հոգւոյն այ և 'ի Հայրապետական իշխանութենէս մերմէ՝ կատարել զգործ և զպաշտօն և զիշխանութիւն հովուոր Առաջնորդութեան և եպիսկոպոսութեան 'ի յամ թեմս և 'ի վիճակս իւր ։ Յորս զկապելսն կապել, և զարձակելսն արձակել . և մանաւանդ ըստ Առաքելոյն բանի. զթիւրեալսն յօրինացն այ սաստել յանդիմանել, և դարձեալ մխիթարել և սփոփել՝ մինչ վերադարձին 'ի շաւիղս ուղղութեան և ճշմարտութեան ։

Իսկ չունի ոք ամենևին զհրաման և զիշխանութիւն, առանց դորին գիտութեանն և հրամանին՝ ձեռնամուխ լինել 'ի գործս հոգևորս օրինաց և եկեղեցւոյ, թէ եկեղեցականաց ձեռնադրութեան, թէ պսակաց հրամանատուութեան և թէ այլ իրաւութեց կանոնաւորաց ։ Քանզի եկեղեցի ձեր հանդերձ եօթն խորհրդովն իւրովք դմա յանձնեցաւ յայ և 'ի մէնջ ։ Վասն որոյ ամ եկեղեցական կարգ և արարողութիւնք, նաև հաւատոյ և օրինաց բանք պարտին հրամանաւ և գիտութեամբ դորին կատարիլ ։ Ուրեմն՝ եթէ ոք 'ի վիճակէդ յայդմանէ թողեալ զԱռաջնորդն իւրեանց գնասցեալ յայլ-

յեպիսկոպոսաց առնուցու զքահանայութիւն և կամ զայլ աստիճան ինչ, անընդունակ է այնպիսւոյ կարգաւորութիւնն և ընդդէմ սրբոց կանոնաց, և չունի հրաման ՚ի յեկեղեցիս ձեր մտանել և զկարգն զայն պաշտել. զի սրբապիղծ է այնպիսին :

Չորրորդ՝ պատուիրեմք սիրելեացդ մերոց, զի որպէս դա զզանազան տքնութիւնս և զաշխատանս կրելոց է հոգևպէս վասն ձեր, պարտիք և դուք զամենայն մարմնական պակասութիւնս դորա հոգալ :

Այսինքն՝ յօժար սրտիւք և զուարթ երեսօք զամենայն հասս և զիրաւունս վանիցն և Առաջնորդականն հասուցանել ՚ի ձեռն դորա լիապէս և անթերի, զսրբադրամն, զԱթուահասն, զՊտղին, զՔառասիցն, զՀոգեբաժինն, զկողոպուտն, զԴիազարդն, զտօնականն, խաչօրհնէքն, զմատաղն, զԱռաջնորդական թապախն և զվանից Գանձանակն, և զայլս զորս դուք ունիք ՚ի միջի ձերում և զնախաւանդութիւնս և զսովորութիւնս :

Հինգերորդ՝ այսք տէրունիք ևս պարտին դմա հասանիլ, այսինքն աւուրք հինգ տաղաւարացն, տունք Քահանայից, Եկեղեցպան իշխանաց, Իրիցփոխաց, Ազատաց, Եկամտից, Յանկարծամահից, անհաղորդից Անյիշատակաց, Ժամկոչաց, և այլք այսպիսիք, որք ամենեքեան Առաջնորդին են կանոնական հրամանաւ :

Առդ

Արդ՝ յայսց վերոյ գրեցելոց և կամ յայլոց Առաջնորդական և վանքական հասից և իրաճանց՝ եթէ կամիցի ոք հատանել, կամ արգելուլ, կամ յապշտակել, և կամ գողանալ, ամէն ասեմ, զի այնպիսին զպատիժս կրեսցէ յայ և 'ի մէնջ: Իսկ որք անխափան տայցեն յօժարութեամբք և զհրամանս մեր կատարեն՝ եղիցին օրհնեցեալք յամենասուրբ Երրորդութենէն, և յամ սրբոց նորա և 'ի մէնջ իսկ ամէն:

Ապա ուրեմն՝ պարտիք դուք սիրելիքդ մեր՝ զամ հասս և զիրաւունս տալ առատապէս հարազատի որդւոյ մերում և Առաջնորդի ձերում Յակոբ արխաջան վարդապետիդ, զի նոքօք զվանքն ձեր՝ զյատկապէս հոգեկան տունն այն տուրբ, շէն և պայծառ պահեսցէ՝ լցեալ բազմութեամբք միաբանից, հաստատեալ ժամակարգութեամբ և սաղմոսերգութեամբ, և այլովք հոգեկան պաշտմամբք զարդարեալ 'ի պարծանս ձեր:

Յորոց և դուք զմասն մեծ և զբաժին առատ ընկալջիք աստ և 'ի հանդերձելումն: ամէն:

Այլև՝ զմիւս բազմակնիք թուղթն ձեր՝ դաշնադրութիւն ես, յորում ուխտիւ չափդրեալ և հաստատեալ էիք, զի մարմնաւոր կառավարութիւնն ձեր, մի լիցի 'ի վերայ Առաջնորդին, խառն ընդ հոգևոր գործո նորին, այլ ըստ աշխարհի կառավարիչն ձեր՝ որէ քեալանթարն՝ աշխարհական լիցի, և ընտ-

րու

րութեամբ հասարակութեանդ կարգեցի. և
Առաջնորդն ձեր հոգևոր իշխանութիւնն
և գործն վարեսցէ, և զայլս վեց բանս ընդ-
նմին, ընթերցջիք և վերծանեսջիք և հաճա-
նեսջիք դաշնադրութեանցն ձերոյ:

Որք յիրաւի՝ են ըստ նախնեացն ձերոյ շաւղի.
և են Աստուածահաճոյք և օգտակարք ձեզ, և Առաջ-
նորդիս և սէր վանիցն, և շինուց ձերոյ:

Ուրեմն՝ որպէս հաւանիմ խորհրդով և միա-
բանութեամբ արձանագրեալ էք և հաստա-
տեալ, պարտիք անքակտելի և հաստատուն
ունիլ և պահել, վասն խաղաղութեան և բա-
րեկեցութեան հասարակութեանդ:

Ընդ որս և մեք շնորհակալութեամբ օրհնե-
ցեմք զպահօղսդ, և զհաստատ մնացօղսդ ՚ի
բանս ձեր:

Իսկ դուք որք շեղեցին յայդցանէ, պարտաւորք
են լինելոյ առաջի Այ և մարդկան՝ և արժանիք
են գտանելոյ դատապարտմանց, որպէս և դուք
գրեալ էք և կնքեալ:

Դարձեալ՝ զայս ևս գիտասջիք սիրելիք և հոգե-
որ որդիք մեր:

Զի հաւատարիմ զաւակդ սրբոյ Աթոռոյս և
շնորհածին որդիդ մեր Յակոբ Աճիմեան Վ. ար-
դապետդ, որ յառաջագոյն ՚ի վերադառնալն
աստի՝ սրբալոյս Մեռոն ետուք ինքեան՝ և
օրհնութե կոնդակաւ նուիրակ կարգեցաք
ձեզ. յանձնելով ամին զգործն նուիրակութե

որ

օրհնեցելոյ վիճակիդ աճարտեալ, զմնուճի-
բանկական արդիւնսն ձեր լիապէս եւ անթերի
հասոյց ՚ի սուրբ Նթսուս եւ առ մեզ ։
Ուստի՝ եւ մեք մեծաւ շնորհակալութեամբ ըն-
կալեալ զայն՝ մատուցաք անկարօտին Այ, առա-
ջի սրբոյ եւ սալրափելոյ տեղւոյս Միածնաէջի,
եւ համայն միաբանիւք օրհնեցաք զձեզ զամենն՝
զկենդանիսդ՝ եւ զննջեցեալսն ձեր ։
Զորս տր օրհնեսցէ եւ զօրացուսցէ, որդւովք
եւ դստերօք ծաղկեցուսցէ ․ ՚ի յառաջիկայից
հոգեկան եւ մարմնական փորձութեանց ազա-
տեսցէ եւ պահեսցէ միշտ ՚ի խնամս իւր, ՚ի խաղա-
ղութեան ՚ի յաջողութեան եւ բարեկացութ ։
Իսկ լուսաւորեսցէ զհոգիս ննջեցելոցն ձերոց,
եւ հանգուսցէ ՚ի լուս երեսաց իւրոյ յարքայ-
ութիւն իւր սուրբ ։ Իսկ ըդն միոյն տրոց ձերոց
հատուսցէ ձեզ զհազարապատիկ եւ զբիւրա-
պատիկ վարձս ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ ։
ամէն ։

Ծանիր՝ վասն նորոյ Առաջնորդ կարգելոյ
մերոյ զՅակոբ հանճարունակ վարդապետդ,
եւ յաղագս չքաւորութեանց եւ պակասու-
թեանց սրբոյ վանիցդ ձերոց գյորդորա-
նաց կոնդակ գրեցաք ՚ի վերայ Նդկաց եր-
կրի ժողովրդոցն մեր ազնէից, եւ յղեցաք առ-
Յակոբ վարդապետդ, զի նդա ձեռամբ ու-
րուք հարազատ միաբանի իւրոյ խոհեմ վար-
դապետի առաքեսցէ առ նոսա, որք զլիաձեռն

տուրս

տուրս տալով օգնութիւն արասցեն աղքատու-
թեան սրբոյ վանիցդ, զի իցէ թէ ողորմու-
թեամբն այ գտանիցէ զառաջին լրութիւնն
և զպայծառութիւնն. և լցի 'ի մխիթարու-
թիւն և'ի հոգևորապէս ուրախութիւն ձեզ:
Այսպէս գիտացեալ՝ զորդիական սէր և զհարա-
զատութիւն ձեր ամենում և ամենեցուն ունիցիք
առ սուրբ Աթոռ մայրս ձեր և առ մեզ, և ջա-
նասջիք յամենայնի բարեպաշտօրէն և եղբա-
րասիրութեամբ կենցաղավարել, և բարի համ-
բաւօք ձերովք ուրախ առնել զհոգևոր
հայրութիւնս մեր:
Զի ըստ սրբոյն Յոհաննու Առաքելոյ [illegible] ևս
ուրախութիւն ոչ գոյ ինձ քան զայս, եթէ
լսիցեմ թէ՝ որդեակքդ իմ ճշմարտութեամբ
ըստ հաճոյից այ գնայք:
Որք և լիջիք օրհնեալք և զօրացեալք 'ի տէ, և
յանձնեցեալք 'ի բարեգթութիւն նորին:
Եւ շնորհք Աճեան սրբոյ Գահիս եղիցի ընդ
ձեզ ամենեսեան: ամէն:
Գրեցաւ 'ի ռՄԼԷ թուին, 'ի Հոկտեմբերի
, առ Դրան լուսակառոյց Մեծի և սրբոյ
Աթոռոյս ԷՋՄԻԱԾՆԻ.

Օրինակ Իշխանութեան և հենգերլորութե ժողովին Մադրասու Հայոց ցածուցեալ 'ի գահերէն աւուրք ի նեղեալն Հայոց, Մադրասուած օգոստոսի ամսոյ ։ 7 Յունին Տեառն փրկչին մերոյ ։ 1793 ։

Յարութիւն տէր խաչատուր դպիրն որբոց Մադրասու հայոց ընթերցաւ 'ի ատեան հասարակ յաճախեալ ժողովրդոց, գիրն Նոր Ջուղայոց բնակողաց, եւ թէ քահանայից և թէ աշխարհականաց զանազան անուամբ ստորագրեալ 'ի թուէն ։ 1791 ։ և 'ի յամսեան յուլիսի 8 էն ։ Հարեալ ։

Նաեւս ընթերցաւ Պատասխանին Պարոն Հառ[...] Սուլթանումի առ տեղակալն Առաջնորդի Նոր Ջուղայու որ էր 'ի յամսեան համիրայ 5 ։ յամի տն ։ 1792 ։ որում օրինակն նորին նշանաւորեալ Ա ։

Նաեւս ընթերցաւ գրուածքն կառավարչաց բոց Մադրասու Հայոց որ էր ի յամսեան Սեպտեմբերի 3 յամի տն ։ 1792 որում, օրինակն նորին նշանաւորեալ Բ ։

Նաեւս ընթերցաւ Պատուէրն հասարակաց Երեսուն և երկու Երրորդ ժողովեն որ եղե սեպտեմբերի ամսոյ 3 ։ յամի տն ։ 1792 ։ օրինակն նորին նշանաւորեալ Գ ։

Նաեւս ընթերցաւ Թուղթն Պատուէրի կառավարչաց որբոց Մադրասու Հայոց 'ի յամսեանն յուլիսի 9 ։ յամի տն փրկչին մերոյ ։ 1793 ։ Որում օրինակ նորին նշանաւորեալ Դ ։

Նաեւ ընթերցաւ գիրն նշանաւոր արանց բնակողաց Մադրասիս որ առ կառավարիչսն որբոց Մադրասիս Հայոց, 'ի յամսեան յուլիսի 25 և 'ի թուին 1793: Որում օրինակն նորին նշանաւորեալ Ի:

Նաեւ ընթերցաւ գիրն սրբակրօն Տն Յակոբ Արքեպիսկոպոսի Առաջնորդին Նոր Ջուղայու, հանդերձ համարագրաւն անօթ որբութեանց, որք էին 'ի յամսեանն յուլիսի 23 և 'ի թուին 1792: և 1793: Որում օրինակն նոյին նշանաւորեալ Զ: և Է:

Նաեւ եցոյց նամակն սրբազան Հայրապետին Տն Ղուկասու հայոց կաթուղիկոսի, վասն Պաշտօնի Առաջնորդութեանն Սրբակրօն տն Յակոբ Արքեպիսկոպոսի որէր 'ի յամսեան հոկտեմբերի և 'ի թուին Հայոց 1236: 'ի վաղարշապատ, որում ընթերցեալ 'ի Առաջնորդաց սեղանոյ 'ի լսել հասարակաց արանց, կանանց ծերոց և տղայոց, որում օրինակն նորին նշանաւորեալ Ը:

'Ի վեր յիշեցեալ գրեանց ընթերցմանէ բոլորն լուաք և Հնորհ 'ի նորին Սրբութենէ ստացաք, զի ինքն տն Յակոբ Արքեպիսկոպոս Առաջնորդն Նոր Ջուղայու անձամբ եմուտ ընդ մեզ 'ի խումբն հաւաքեալ ժողովրդոց, և ետ համարձակութիւն առ հասարակութեն զի իւրաքանչ ոք անձամբ ազատապէս հարցցէ

զոր

զոր ինչ որ կամիցի, այսպէս խոնարհաբար և և հեզութբ խօսեցաք ընդ նմա, և՛ ի նորին սրբութենէ ստացաք սիրով պատասխանս հարցմանց մերոց և ապա եղաք 'ի Ղարս կառավարութեանն նախ անձանց մերոց և ապա թողլով նշանակ մի քարի վասն ազգին Նոր Ջուղայու Հայոց այսինքն ։

Նախ մեք ունիմք աւանդութիւնն 'ի նշանակ գրքէ օրինացն կառավարելոյ որբոց մադրասիս Հայոց գլուխ 11 ։ և 12 ։ երրորդն, զի աշխարհական մի՛ շաղախեսցի անձամբ ընդ գործս եկեղեցականաց, և նմանապէս եկեղեցականք մի՛ շաղախեսցի անձամբ ընդ գործս աշխարհականաց, յաւէլ քան զայս․ ևս լուծաք 'ի նամակէ սրբազան Հայրապետի նշանաւորեալ Ը ։

Զի հաճոյ թուեցեալ նորին սրբութեան և հրամայէ զի ոչ ոք եկեղեցականք ոչ ունին իշխանութիւն շաղախիլ զինքեանս ընդ գործս աշխարհականաց, և հրամայէ մեզ աշխարհականացս զի մեք ևս մի շաղախեսցուք ընդ գործս եկեղեցականաց, վասն որոյ մեք ոչ ունիմք ունկն լսելոյ որ ոք գանկատ 'ի եկեղեցականացէ առ ումեք եկեղեցականի, և ոչ կարողութիւնն դատելոյ, ուրեմն զոր ինչ գանկատ որ Ջուղու եկեղեցականք 'ի վերայիշեալ գրաւն մեզ գանկատեցին ներեն մերոց անկարութեն, և եթէ իրաւի ունիցին գանկատ ինչ

ըն

ընծայեն առ 'ի սահմանն Սրբազան հայրապետին հայոց, և 'ի նմանէ ակն ընկալցեն դատելոյ։

Իբր դառնամք առ խումբս աշխարհականաց որում անուամբ ձեռնադրեալ տեսանեմք 'ի վեր յիշեալ գրուածքն, զի հարկաւոր էր նոցա մտածէին իւրեանց հնազանդութեան մանգաղին որ ուղարկէին սրբազան Հայրապետին, և 'ի նմա վկայէին մաքրութեն, այժմ գանկատել անձին և արժանաւորութեն եպիսկոպոսութեն, յատկպս իւրեանց Առաջնորդութեն առ պատուէ Սրբազան հայրապետին 'ի նամակի իւրոյ նշանաւորեալ Ը։ Մեք ոչ կարեմք մտածել եթէ միջոցն փոքր ամ ժամանակի ըստ վկայելոյ ձերոց մաքուրն, անարատն, արժանի Պաշտօնի եպիսկոպոսութեանն ընտրեալն 'ի ձէնջ Առաջնորդութեանն կարէ փոխարկիլ 'ի այնքան անկարգութիւնս, որում ընկերցաք 'ի գրեցեալն ձեր, ուրեմն մի 'ի երկուց ժամանակի կամք ձեր գոլ կարէ ողալեցեալ, որոյ Դատաւորն կարէ քննիլ. և վարձահատուց առնել ըստ իւրաքանչ գործոյ իւրոյ, վասն որոյ 'ի վեր յիշեցեալ ջուղայուց եկեալ հասարակաց անուամբ ստորագրեալ գիրն ոչ կարողաք ոչ արդարացուցանել և ոչ ստել, թէ ոչ կարօղ [illegible]ասցէ 'ի կամս ստորագրողաց, եթէ նոքա հաճատի ունիցին իրաւունս զանկատս իւրեանց ընծայեսցեն 'ի Դրունս սրբութեանն Հայրապետին Հայոց, և 'ի նմանէ ակն ընկալցուն

դատ

դատելոյ, և վասն բարեպէս վարելոյ զկեանս բնակչաց ջուղայու խորհուրդն մեր որ ունիմք տալ ձեզ եթէ հանձն թուեսցի կամաց ձերոց յառաջանալ 'ի գործ այսմիկ, 55: ամօք յառաջ քան զայսօր 'ի ժամանակի թագաւորութեանն Պարսից Նատէր Շահի և 'ի իշխանութիւնն ջուղայոյ Պարոն Ամիրջան Դաւութխանի բոլոր թէ հարկ, թէ մաքս կերակրոց, թէ հաս, թէ բաժին թէ գլխահարկ և այլն, որում ամէն մախտէն ջուղու ոչէր յաճելն քանթէ 700: թուման, մինչ ջուղայ լիքնէր բնակչօք, յատկապէս հարուստ անձամբ, այնու յետ նուաճելով մինչ 'ի ժամանակն թագաւորութեանն քէրիմխանի, և իշխանութիւնն ջուղայու պարոն Սարգիս տէր Սիմոնի. ասացեալ մախտէն հաստատեցին միայն 200: թուման; և այժմոյս լսեմք զի 'ի այս թշուառ ժամանակիս մինչ բնակիչքն ջուղայու յազիւ լցուցանեն քաղցն յորովայնի և քօղաւորեն մերկս անձանց իւրեանց, բռնաւորքն ձեր յաւելորդացուցին մախտէն ձեր մինչև ց 700: թուման, վասն որոյ հարկաւոր է ձեզ նախ ջանալ եթէ կարելի զի մախտէն ձեր կրկին իջուցանել մինչ 2: կամ 300: թուման, եթէ անկարելի ուրեմն թէ 300: թէ 700: թուման որ բռնաւորքն ձեր առանան 'ի ձէնջ.

Յայնժամ յետոյն ճարն եթէ կամիք այսէ

աւ.

առնելոյ զի 'ի միջի ձերում ընտրեցէք այրս
եօթն ձեզ փոխանորդ և ամբոխն ձեռնադրեսցի
'ի մի թղթոյ ընդունելութեն իւր զինոջս կառա-
վարեսցեն գործն մախտին զի ձերոց քահանայորաց
ցանկալի մախտէն, այսինքն թուման 700:
նաև ծախ չուղբաշու, դռնա) 50:
պանի, գրագրի կարէ լինիլ)

որում բովանդակի բոլորն 750: թուման,

'Ի սմանէ հանեցէք բոլոր տրանց գլխա-
հարկն սարփօլե, և մէդանի, և դուքանդա-
րէրի հարկն, զոր ինչ բաղե մնայ բաժանեցէք
ջուղու խողէն և 'ի նորին յառոգանելէ բա-
ժանին ջրին վերայ, որպէս լսումաք որ 44:
և կէս բաժինայ ջուղու ջուրն, այլ վասն պա-
հելոյ պատիւն կրօնաւորաց, վանօրէից ջու-
ղայու, նախ ազատ արարէք 50: ջրիբ երկիր,
'ի սմանէ 40: ջրիբն սբ Յովսեփայ վանքին
միաբանից, և 10: ջրիբն սուրբ կատարինեան
վանքին ապաշխարողաց, մնացորդն համահաւա-
սար բաժանեցէք ջուր ըմպօղ երկրի վերայ,
և առացէք քանակութիւնն իւրաքանչ տերանց
երկրին:

Երկրորդ յատկութիւնն անցից և պատ-
ճառն նորին սրբութեն ելանելոյ 'ի Աթոռէ
սուրբ Յովսէփայ Յարեմաթացւոյ, և գալուստն
նորին այսքան յեռի մինչև Մադրաս, աստ
որպէս 'ի գիրն նշանաւորեալ Զ:

Եւ

իմ ետ երիս պատճառս, նախ վասն բարե-
պէս կարգադրութեանն, երկրորդ Պետրոս որ
բարդեցաւ 'ի վերայ նոյն սրբոյ Աթոռոյ,
երրորդ ծախս կենաց նորին Սրբութեանն,
վասն որոյ հաճոյ թուեցաւ մեզ զի եթէ նորին
Սրբութիւնն կամի զի մի կոնտակ թողցէ վասն
հասարակ բնակողաց 'ի հնդիկս, և տացցէ իշ-
խանութիւն իւրաքանչ տեղիս կառավարչաց
որբոց Հայոց զի նոքա հանդերձ երկու նշա-
նաւոր արամբ ունիցին իշխանութիւնն
ամենայն երիս ամ մի անգամ շրջեցուցանեն
թուղթ նուիրանաց զոր ինչ քանակութեամբ
Դրամ թէ նուիրակութեան, թէ հոգա-
բաժին կտակի և այլն, որ հաւաքմե մուծանեն
իւրաքանչ տեղի 'ի սընդուկն որբոց Հայոց,
նորին տարեկան հաշն ընծայեն առ 'ի Դր-
ունս վանքին սրբոյ Յարեմաթացւոյ 'ի Նոր
Ջուղայ, կամ 'ի ձեռն նորին սրբութեանն,
կամ 'ի ձեռն նորին Աջորդի և քանակութիւն
նուիրանաց և այլն կալով մնացէ 'ի սնդուկն
որբոց Հայոց, մինչ տր այց արասցէ ելցէ հա-
ճատի տէր և կառաւարիչ 'ի սպահան քաղաքի
որում հաւատալ կարելանամք զի բարեպէս
Պահպանելոցեն Նոր Ջուղայու բնակչաց, և
վանօրէից, և եկեղեցեաց, յայնժամ 'ի Առա-
ջնորդէ վանքին և երիս Աճագ քահանայի,
և երիս նշանաւոր աշխարհականի ռստով մի-
ջոյ տասն տարի ժամանակում ֆի ժն տարէն

իբր

իբր տասանորդն քանակութեան հաձնեն առ Յօվսէփա վանքին, այլ եթէ ոչ մի՛ ա-լուացէ անդրադարձն նորին բնաւորք Ջուղայու-կողոպտում լինեն, որպէս անցելում ժամանակի և այժմս, յայնժամ հաւաքեալ նուէրք այն ինչ քանակութեամբ որ լինի կալով տացէ իւրաքանչիւր տեղիս 'ի սնդունկս որբոց Հայոց վասն մխիթարութեան և վայելման որբոց, տնանկաց և աղքատաց Հայոց: Նաև ունիցին իշխանութիւնն Պահելոյ Քահանայքս իւրաքանչիւր տեղի վիճակի քանիցս անձին որ հաճեսցի կամաց իւրեանց հինգ ամ ժամանակաւ, եթէ դուցէ զի պահեսցեն յաւելլի քան զհինգ ամս, յայնժամ պարտ լինի իւրաքանչ Քահանայի որ յետ հինգ ամաց յաւելլի մնալ թէ ժամանակին իւրոյ հատուսցանէ ֆի տարէն 80: դահեկան երծաթ, որոյ 40 ըն առաջնորդն Շնորհեսցէ Ջուղու բնակեալ Քահանայից նոցա որ ակն ունին ստանալ վիճակ 'ի հնդիկս: Իսկ որք քահանայ 'ի որում վիճակի եթէ լինիցի քսու, բանսարկու, աղմկօղ, գինարբու, յանդուգն, բարկացօղ, և ևս առաւել անիծանօղ, հանիցեն նմա 'ի վիճակէ իւրմէ, զի բարցի Աղմուկ 'ի մէնջ, և իւրաքանչ տեղիս կալով մնասցեն խաղաղութեամբ սու 'ի Պատուն ազգին Հայոց: Իսկ վասն բազմանալոյ Պարտուն 'ի վերայ Որբոց Աթոռոյ ոչէ առաջին և ոչ վերջին, յատկապէս ընդ հօվանաւորութեամբն Պարսից

քահանայորաց, որում հաճատացեալեմք զի ոչ ոք գանձ կարէ լցուցանել ցանկութիւն սրտի նոցա, և ոչ ոք քանակութեամբ պահանջմամբ նոքա, բաճականտնան ՚ի մէնջ, ուրեմն նոքա որ ցանկացան գանձել զգանձս իւրեանց վաշխիւն սրբոյ Աթոռէն պարտէ նոցա կալով սպասեսցեն մինչ խոստանայցէ ժամանակն, զի սուրբ Աթոռն կարօղ լինիցի հատուցանել նոցա, և վասն բարեպէս կարգադրութ ‡ ընթացուցանելն ժամանակն Սրբոյ Աթոռուին որ ՚ի ջուղայ ըստ ծանօթու- թեան մերոյ ոչ ոք իրօք կարի լինիլ հանդոր- րութիւն ոչ քոյին սրբութիւնն, և ոչ խղճուկ կրօնաւորաց. բայց առաքատութեամբ եթէ հաճեսցի կամաց քոյին սրբութեան, և յետ քեզանէ կամաց յաջորդին քոյ, լսել և գործա- ծել խորհուրդս մեր, այսինքն զի նախ հարկա- ւորէ միշտ լինիլ եպիսկոպոս մի, կամ ՚ի ջուղայ կամ շուրջ նորին որ ոք ապահով տեղի. վասն հովուելոյ Քրիստոնէութիւնն Պէրսիայ բնա կեալ հայոց, եթէ ձեռնադրութիւնն Քահա նայից, և եթէ այլում կառավարութիւնն քրիս- տոնէական հաճատոյ և ՚ի վանքն սրբոյ Յովսէ փայ Պահել հարկաւորէ ։5։ անձինք վասն Պաշտաման․ սուրբ տան, և կատարելոյ սաղմոս երգութիւնն և այլն, այսինքն

երեք․ Վարդապետք Քարոզիչք։
երեք․ Աբեղայ Կրօնաւոր։
երկու․ Կղերիկոս։

Չորք ։ Դպիր ։
մին ։ Հացթուխ, և կերակուր եփող ։
մին ։ խաշնարած ։
մին ։ Դռնապան ։
( 15 ) Գումարն է

Իսկ զարդ սրբոյ վանքին դարձյ ծմ սնոտի ակի,
երծաթ, Ակունքն, և արծ փայտեղէն բլո-
րեղէն, և երկաթեղէն. քան զի մեք երբէք ակն
ոչ ունիմք գտանել որոց Շնորհ 'ի որոց մնո-
տի իրացէ, նաև թաճական լինի մերոց սղա-
լանքն զի զարդարելով մնոտի իրօք տաճարն
ոյ ընդ Հովանաւորութեան անօրինաց, և մեք
կալով մնայցեմք սալսափմամբ դողալով 'ի յեր
կիւղէ կողոպտման, և վասն փրկելոյ զարդս
մեր հարիւրաւոր դահեկանի, կաշառակուր
առնեմք թունաւորաց մերոց հազարաւոր դահե
կանօք, զի նոյն միայնակ պատճառն օր աւուր
դիզէ Պարտս 'ի վերայ սրբոյ տանն, և զգեստ
կրօնաւորաց և այլն հասա կտաւէ և մազեղէ
նաւ որպէս սովորութիւնէ կրօնաւորաց, և
մի խոստանայցէ սրբութիւնն քոյ մտանիլ 'ի
Սուրբ կրօնն ապաշխարողաց օրիորդք ջուղայու,
մինչ ոչեցէ այն հասակի նորա 60 ։ ամաց, զի
զերծցի Սրբութիւնն մեր 'ի պղծութենէ
այլազգաց քանզի անխախտելի սովորութիւնէ
Պարսից, զի որոք նորոգ Թագաւոր և տիեզե
թակալ որ նստցի 'ի աթոռ տէրութեան Պար
սից ժողովրդեան նորա ընծայել ուատելս և

դրա

դստերս իւրեանց, այն որ գեղեցկատեսիլ և վայելուչ նորին Արքայական բարձրութեան, թէպէտ ժողովուրդ մահմետականք սիրով ընծայեն մանկունս իւրեանց զի գտցեն շնորհս 'ի Տեառնէ իւրեանց, այլ անդրադարձն նորին ընդդէմ կամաց մերոց, և ընդդէմ կամաց ուխտաւոր ապաշխարօղ օրիորդաց մերոց, բռնաբարութ հանեն ապաշխարօղ կուսանս մեր, զի տա տաժ սրտի մերոյ և նեղէ յոյժ խղճմտանս մեր, և արդ ոչէ ցանկութիւնն սրտի մերոյ զի կողոպտել զարդ տանն մոյ և զենուլ ողջակէզն մեր 'ի Պատուածացեալ զուարկէ Պատարագ նմա, քաւ մի՛ լինիցի այլ հարկն Պարտաւորէ մեզ հնարաւորիլ և փրկել թէ կրօնաւորս, թէ ապաշխարօղս, թէ զարդս 'ի լքելմանէ 'ի կողոպտմանէ և 'ի տանջանաց անօրինաց, նոցա որում պահպանեն 'ի նոր ջուղայ՝ եթէ այսպէս ուրեմն լինի հանդարտութիւնն, ոչ միայն բնակչաց ջուղայու, նաև արգելէ ձկտումն մտաց կողոպտողաց մերոց, քանզի 'ի մին, կամ երկու անգամ նոքա ձեռնամուխ լինելով, և կամ անձամբ մտանելով 'ի տուն Տեառն գտանելով նմա թափուր 'ի ընչից և բնակեալ 'ի ցամաքեալ բնութեամբ կրօնաւորօք և ապաշխարացողօք հրաժարին 'ի չարութենէ իւրեանց և այլն:

Իւր ծախս կարեաց հոգետասանարանց 'ի տան Սրբոյ վանքին խորհուրդ մեր առ այս զի վանքն

Սրբոյ

Սրբոյ Յովսեփայ ունի այգեստանս 'ի Նոր Ջու-
ղայ յաճելի կամ պակաս 300 : ջրիբ երկիր
պտղաբեր, 40 : ջրիբն 'ի նմանէ կալով ծառոցէ
ազատ 'ի հարկից, մաքսից, հասից և բաժնից ,
զի պտուղ նորայ և նուէրք 40 : գիւղօրէից բնա-
կեալք ազգէն, հայոց շուրջ սպահան քաղաքի ,
հանդերձ որոք մնաւոր եկամուտք թէ Ջու-
ղայ բնակողաց հարսանեաց, պաշտօնէից և այլն ,
և եթէ վաշխն նուէրմանց 'ի հնդիկս բնակողաց
հայոց կարէ լինիլ շատ աւելի քանթէ ծախս
հնգետասան արանց, եթէ նոքա կամին զի լինի
ցին երկայնամիտ, կարող կը լինեն դեռ և ս
վարժու պահել 3 : վարդապետս վասն ուսուցա
նելոյ մանկանց Ջուղայու հայոց, այսինքն :
մին . Հայերէն բառից և տառից արհես
տին ընթերցմունս :
մին . Պատկերահանութեան :
մին . Բժշկութեան :
Զի ուսեալն այս արհեստաց երբեմն կարէ
լինիլ սիրելի իշխանաց բռնաւորաց Ջուղու
և 'ի պատճառի նորին սիրելութեանն կարէ
փրկել Ջուղայ 'ի բազում փորձութենէ և
ըստ բանին ծծայլնտիր թագաւորին դուլթի
զվաստակս ձեռաց ուսեալն երանի և բարի
լինիցի և վասն չունեւորութեանն հաստատուն
բանի որ կարի միխթարել ծախս կենաց նորին
որբութեանն , թէպէտ բարեաք գիտեմք
սովորութիւնն քրիստոնէից, յատկապէս եր-
ջան

Ջանիկ թագաւորաց որ ունին զանազան գան-
ձարանս վասն մխիթարելոյ սրբակրօն եպիս-
կոպոսաց և հատուցանելոյ ծախս քարոզչ վար-
դապետաց որք ընդ հեթանոսս, և ծախս որբոց,
աղքատաց, տնանկաց և այլն ։

Որ 'ի մէջ նոցին որք քորեպիսկոպոսաց 'ի ար-
քունի գանձարանէ ունի ռոճիկք, ոչ պակա-
սագոյն քան թէ 2500 ։ դահեկան երծաթ, փ
ռուփի, որովհետև զի միջոց յաւելի կամ պա-
կաս 400 ։ ամօք փոխարկեցաւ գանձարանն
'ի արքունիս մերոյ. ընդ սէր սրտի մերոյ կապա-
կցեալ ընդ քրիստոնէական հաւատոյ մեր.
այսպէս և եթէ նորին սրբութիւնն նայիցէ
թշուառութիւնն ազգին իւրոյ, և զսպեսցէ
ծախս կենաց իւրոց, որպէս հաւատացեալ եմք
զի 1200 ։ դահեկան երծաթ 'ի մի տարւոյ բա-
րեպէս կարէ մխիթարել կեանս սրբութեան
նորա, եթէ այսպէս ուրեմն հաճոյ թուեցաւ
մեզ զի նորին սրբութին 'ի ժամանակի հնազանդ-
լինելոյ իւրոյ առ սրբազան Հայրապետին հայոց
որ ի վաղարշապատ և եթէ ունիցի զպաշտօն
Առաջնորդութեանն 'ի նորին Սրբութենէ
մինչև հանգչել նորա 'ի աթոռն Սրբոյ Յօվսե-
փայ ստանայցէ ֆի մին տարէն 1200 ։ դահե-
կան երծաթ, 'ի այս մտածութեանս որ նա
պահեսցէ 15 ։ կամ յաւելի եթէ հարկաւոր
լինի Քահանայս պասրոյ, սուրաթն, բում-
բայի, մուչլըբանդարն, փէքու, մադրաս,
կալ

Կալկաթայ, Սէյտապատ, Դաքայ և այլն։ Ի նոցանէ սովորական հարկն քահանայից ֆի ամի 40։ դահեկան երծաթն մնացէ վասն ծախի կենաց իւրոց, որում բովանդակն դահեկան 600։ Մնացորդ 600։ ըղուփին 'ի հնդիկս բնակչէն հատուցանեն այսպէս։

| | |
|---|---|
| Պասրայ ֆի մին տարէն | 100։ |
| Սուրաթն | 100։ |
| Բումբայի ֆի մինտարէն | 20։ |
| Մուչլըբադարն | 20։ |
| Փէգու | 10։ |
| Մադրաս | 100։ |
| Կալկաթայ | 100, |
| Սէյտապատ | 100։ |
| Դաքայ | 50։ |
| Գումարնայ | 600։ |

Որում բովանդակն տարեկան 1200։ դահեկան, զի լրութիւնն ծախոյ կենաց նորին տայցէ նմա հանդերձ կեանս, և նմ կալով մնացէ մաքուր, անարատ, որում վայել է Արքութեանն եպիսկոպոսաց և այլն։

Իր եկեղեցական կառավարութիւնն լինիցի 'ի հնդիկս այսպէս։

Նախ հրաման Հայրապետին որ 'ի վաղարշապատ որ ունի 'ի շխանութիւնն 'ի վերայ ամ Հայոց եւթէ իհայեստան և եթէ 'ի տարբ աշխարհ։

Երկրորդ հրամանին վճռական եպիսկոպոսին

որ

բռունիցի նամակ Առաջնորդութեան 'ի հայրապետէն 'ի վերայ տանն Նոր Ջուղայու և բնակեալ պէրսիայ և Հնդիկս բնակեալ հայոց :

Երրորդ պասրու Աւագերէցն հրամայէ 'ի վերայ քահանայի բուշեռու :

Չորրորդ սուրաթի Աւագերէցն հրամայեսցէ 'ի վերայ քահանայից բոմբայու, Ջհանապատ, օվրանկապատայ և հէյդարապատայ :

Հինգերրորդ մադրասի Աւագերէցն հրամայեսցէ 'ի վերայ քահանայից մուչլըբանդարին, Նակփաթանմայ, քալթաճիու և փէգուայ :

Վեցերրորդ կալկաթու Աւագերէցն հրամայեսցէ 'ի վերայ քահանայից չինչրու, սէյտապատայ և դաքու :

Եօթներրորդն ամ հրաման և կառավարութիւնք 'ի վերայ յիշեցեալ Աւագ, քահանայից պարտէ լինիլ համեմատ աւանդութեան հայեաստանեայց սուրբ եկեղեցւոյ, և հրամանաւ Առաջնորդին իւրեանց 'ի Աթոռէն սուրբ Յօվսեփայ 'ի Նոր Ջուղայ :

'Ի վերայ ամ գրուածքն մեր մի լինիցի ձըկտիլ 'ի միտս ընթերցողաց իբր մեք ներքոյ ստորագրօղքս համարձակեցաք, և կամք մեր 'ի այն չէ բոլոր ազգն հայոց բնակեալ 'ի Ջուղայ և շուրջ գիւղօրայք, և կամ բնակեալք 'ի Հընդիկս թէ քահանայք և թէ աշխարհականք հարկիւ ընդունիցեն զկամս մեր. քաւ լիցի, այլ 'ի փորձառութենէ աշխարհի և ծանօթութենէ

թենէ ընդունորաց Ջուղայու, այսքան վասն
Հասարակաց բարի ծանեաք, եթէ հաճեսցի
կամաց հասարակութեան բարի, եթէ ոչ նե-
րեսցեն մեզ իբր բարի մտածութեամբ իւ-
րեանց ազդ արարեալ։

Յետ ամենայնի պատուիրեմք կառավարչաց
որբոց մադրասիս Հայոց զի եթէ Նորին սրբու-
թեանն հաճեսցի մերոց խորհրդատուութեան
և ձեռնադրեալ կնքեսցէ նամակն իւր օրհնու-
թեան և հրամանի որ 'ի վեր յիշեցաք վասն
հասարակաց տեղեաց 'ի հնդիկս, յայնժամ 'ի
վեր յիշեցեալ գրուածքն նշանաւորեալ
Ա։ Բ։ Գ։ Դ։ Ե։ Զ։ Է Ը։

Եւ Նորին սրբութենէ ձեռնադրեալ նա-
մակն և այս մերոց առաջադրութիւնն տպել
տուէք հարիւրաւ որ տետրակօք, տասն 'ի Նոյա-
նէ հանձնեցէք Նորին սրբութեան, 10։ առ
սրբազան Հայրապետն հայոց որ 'ի վաղարշա-
պատ, 10։ յուղարկեցէք Ջուղայ 'ի վանքն սբյ
Յովսէփայ, և պասրայ, սուրաթն, բոմբայի,
մուչլբանդարն, փէգու, կալկաթայ, սէյտա-
պատ, դաքայ, իւրաքանչ տեղիս 3։ հատ,
Մնացորդն մնասցէ 'ի ձեռնունկս որբոց մադրասիս
Հայոց, վասն նշանակ լինելոյ յապագայ ժամա-
նակի, և հաստատութեան արարէք ծախս Նորին
սրբութեանն ըսկսանիլ մուտն Նորին 'ի մադ-
րասս օրէն երեք ըռուփի եթէ յապաղի ելա-
նելն Նորին մադրասիցս առ այլ մինչ օգոստոսի

ամսի վերջ, և՚ի ելանելն Նորին սրբութեան պատրաստեցէք նմա պաշար հացալից վարց Նորին տանող Նուիրին, այս ամենայն ծախին ստացէք ՚ի մնդկէն որբոց մադրասիս հայոց իւրաքանչ իւր եկամտէ, յաւել քան զայս շրջեցուցէք ՚ի մէջ հասարակութեան մադրասիս, հայոց թուղթ մի իբր ընծայի. զի իւրաքանչ ոք ըստ հաճոյից կամաց իւրոց ստորագրեսցեն տուրս իւրեանց իբր ընծայ Նորին սրբութեան ՚ի այս ակնկալութեամբ զի Նորին սրբութիւնն յիշեսցէ զմեզ անմիջեցեալս մեր ՚ի ժամ աղօթից իւրոց, զի տէր փրկեսցէ զմեզ ՚ի գերութենէ այլազգաց, և հանգուսցէ զմեզ ՚ի սեպհական աշխարհն մեր օրհնեալն ՚ի այ արարատ, եղև մադրասուն ՚ի գաւիթն սրբոյ եկեղեցւոյ հայոց օգոստոսի ամսոյ. 17: Յամի Տեառն փրկչին մերոյ մին հազար եօթն հարիւր իննսուն և երեք: 1793:

Աղայ Շահամիր Սուլթանումեան:
Յարութիւն Յակոբեան:
Աղայ Յակոբ Յարութիւնեան:
Աղայ Աճափուր Յարութիւնեան:
Յովհաննէս Յարութիւնեան:
Աղայ Մանուկ Աճափուրեան:
Աղայ Խաչիկ Ալէքսանդրեան:
Յօհանջան Յօհաննէսեան:
Կարապետ Մուրադխանեան:

Ծառայ Գրիգոր Սեթեան ։
Մաթէոս Գրիգոր Սէճանեան ։
Ծառայ Նազար Յովսէփեան Հաճիեան ։
Ծառայ Մարգար Զօրեղեան ։
Մարտիրոս Մելքոնեան ։
Ծառայ Յարութիւն Սարգսեան ։
Ծառայ Թադէոս Սարգսեան ։

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. Ամենափրկիչ Վանք
Նոր Ջուղա

Օրինակ նամակին արժանապատիւ Տեառն Յակոբ արք եպիսկո-
պոսի և Առաջնորդին Նոր Ջուղայու առ Հայոց ազգն հաւա-
տացելոց որդւոց Հայոց 'ի յամսեանն օգոստոսի 20 յամի Տեառն
Փրկչին Մերոյ 1793:

Է



ՔՐԻՍՏՈՍԻ
ծառայ Յակոբ Շնորհօքն այ Արքեպիսկոպոս 'ի Պարս բնակեալ Հայոց և Առաջնորդ վանիցն սբյ Յովսէփայ Յարեմաթացւոյ որ 'ի Նոր Ջուղայ: Նախ աւանդեմ օրհնութիւն իմ, և խնդրեմ 'ի յամենակարող Տեառնէ Շնորհէնայէ ողորմութիւն և խաղաղութիւն իւր սբ 'ի վերայ հոգւոյ և մարմնոյ ձերոյ, ով զօրացեալ հաւատարիմ կառավարչաց որդւոց Հայոց, որ 'ի Պասրայ, Սուրաթն, Մադրասն, և Կալկաթայ, աւ տէր խնդութիւն: Իսկ վասն տարբերութեան ժամանակի' և հետաւորութենէ սրբոյ Աթոռոյն, և անմասնելի ծախոն Նոնշիրանկաց մերոց, հանգոյ լթուեցա ինձ և քաջի համարեցի վասն ժողովրդեանն իմոյ

Նուաստագա-
գոյնէց ծա-
ռայիցն այ
ծառայ Յա-
կոբ Արքեպ
իսկոպոս:

խմբ որում բնակեալ են 'ի Հնդիկս եւ առ իշխա-
նութիւն 'ի վեր յիշեցեալ չորից դրանց,
այսինքն պասրայու, սուրաթին, մադրասիս, և
կալկաթու կառավարչաց որբոց հայոց, նոցա՛
որ այժմս 'ի ընտրողութենէ հասարակութե՟ն :
ունին իշխանութիւն կառավարութե՟ն որբոց,
իւրաքանչ ասացեալ դրանց, նաեւ աջորդաց
նոցին, որըստ սովորութեան կարգադրութե՟ց
իւրեանց նորոգեն ամ ըստ ամէ այսինքն :

Նախ իւրաքանչ դրունս ստանայցեն 'ի
'ի մէնջ մերոց կոնդակաւ վճռականօր քահա-
նայս քանիցս որ հարկաւոր համարեսցեն վասն
պաշտման սրբոց եկեղեցւոյ, և կատարելոց
զխորհուրդ սուրբ եկեղեցւոյ 'ի վերայ ժողո-
վրդոց 'ի յայս կանոնադրութե՟ որպէս 'ի վայր :

Նախ պասրայ ունիցի քահանայս վասն պաս-
րու, և բուշեռու բնակողաց, և բուշեռու-
բնակող քահանէն հնազանդեսցէ պասրայու-
Աւագէրէցին :

Երկրորդ՝ սուրաթն ունիցի քահանայս
վասն սուրաթին, բումբայու, չընհանապատայ,
օվըանկապատայ հէդարապատայ, և քահանայքն
հնազանդեսցեն սուրաթի Աւագէրէցին :

Երրորդ՝ մադրասն ունիցի քահանայս վ՟ն
մադրասի, մուչլիբանդարի, նաքփաթանայ,
փէգուայ, և բթաւիու, և քահանայքն հնա-
զանդեսցեն մադրասիս Աւագէրէցին :

Չորրորդ՝ կալկաթայ ունիցի քահանայս

վ՟ն

վասն կալկաթու, սէյդապատայ, դաքու֊ չինչուրու և այլն, և քահանայքն հնազանդեսցեն կալկաթու Աւագերէցին :

Հինգերորդ՝ զա՛մ գործինչ հրաման ՚ի վերայ չորից դրանցէ ելանելոյ առ ՚ի վեր յիշեցեալ մասնաւոր տեղիս քահանայից, հարկաւորէ լինիլ ՚ի վեր յիշեցեալ չորից դրանց իւրաքանչ տեղի Աւագ քահանայէ, և կառավարչէն որբոց ՚ի նոյն տեղոյն :

Վեցերորդ՝ եթէ ՚ի վեր յիշեցեալ չորից դրանց, և կամ ՚ի ներքոյ նոցա մասնաւոր տեղեաց քահանայից զորինչ նեղութիւն և զանկատ որ ունենան, զբող հասանեսցեն իւրաքանչիւր տեղի կառավարչաց որբոց, հայոց, և զոր ինչ հրաման որ ՚ի կառավարչացէ իւրմէ գտանիցեն, համարեսցեն արդարութիւն :

Եօթներորդ՝ վիճակաւոր քահանայք որ ՚ի հնդիկս մտանեն նոցա ՚ի դրունս վիճակի իւրեանց ՚ի նոյն օրէ համարեսցի մինչև հինգ ամ՟ և յետ լրման հինգ ամաց ժամանակի թողցէ զվիճակս իւր առայլ քահանայից նորոգ եկեղոց, այլ եթէ վիճակաւոր քահանայն լինիցի այրի, և կամ ամուսինն իւրոյ ունիցի ընդ վիճակի իւրում, եթէ կամեսցի յաւելլ քան զհինգ ամ մնալն կարողէ մնալ կրկին հինգ ամս, եթէ հատուցանիցէ ֆի մին տարէն քառասուն րուփի վս՟ օգնականութեան քահանայիցն որ ՚ի ջուղայ, նոցա որք ակն ունին առանալ վիճակ ՚ի հնդիկս :

Երկ

Երկրորդ՝ ուրեք քահանայ լինիցի քոռ, քանամրկու, աղմկող, բարկացող. յանկապէս անիծանող, հանիցեն նմայ 'ի պաշտօնէ վիճակի իւրոյ, եթէ գտցի զի լինիցի յառաջ քան զլինումն ժամանակի վիճակի նորայ:

Երրորդ՝ ամ երից ամաց միանգամ օգոստոսի ամսի ԺԵ ումն կառավարիչք որբոց հայոց, հանդերձ Աւագ քահանայիւ հրաւիրումն արասցեն հասարակութեանն 'ի ժողով, և անդ, դիցեն թուղթ մի՝ նուիրակութեան վասն նուիրանաց ըստ հնոց աւանդութեան նուիրակի 'ի մրբոյ աթոռէն սրբոյն Յովսէփայ Յարեմաթացւոյ, և մերոյ կողմանէ յորդորեսցեն համարակ ժողովրդոց զի իւրաքանչ ստորագրեսցեն զսովորական տուրս իւրեանց նուիրակութեան, և հոգէ բաժին կտակաց, և այլն:

Նմանապէս 'ի մասնաւոր տեղիս Աւագ քահանայն եթէ չունիցին կառավարիչք որբոց, առցէ ընդ իւր երկուս նշանաւոր արս ընտրեալ յիւրաքանչիւր տեղիս, և յորդորեսցէ նուէրս նուիրակութեան և այլն որպէս 'ի վերն ասացի:

Զամենայն զոր ինչ 'ի մասնաւոր տեղիս հաւաքել՝ առաքեն յիւրաքանչիւր 'ի դրունս իւրեանց, և ստանայցեն 'ի կառավարիչք դրանց իւրեանց ըստ իւրաքանչիւր դրանց:

Իսկ կառավարիչքն որբոց իւրաքանչ երից ամաց նուիրակութիւնն հանդերձ մասնաւոր տեղեաց նուիրակութեամբն մուծանեն 'ի սըն-

դուկս

դուկս որբոց հայոց, 'ի յանուն նուիրակու-
թեան սրբոյ Աթոռոյն Յօվսէփայ Յարեմա-
թացւոյ որ 'ի Նոր Ջուղայ, ժամանակաւ տասն
ամաւ, զի կալով մնացէ վաշխիւ, և նորին վաշ-
խն տարեց տարի առաքեսցեն առ սբ Աթոռն
վասն մխիթարութեան նորին միաբանից, 'ի
յայս դաշինս՝ որ յետ տասն ամաց եթէ եկցէ
ոմն իշխան տէր աշխարհին պարսից, որում բա-
րեպէս պահպանէ զեօղաքաղաքն Նոր Ջուղայ,
զի բարձի յաւելորդ պահանջմունք և կողոպ-
տումն բնակաւորաց, յայնժամ գլուխ դրամն
որոք քանակութեամբ որ հաւաքեալ լինի 'ի
մէջ անդկին որբոց հայոց, տասն տարուն ֆի-
մին տարէն տասանորդն հանցնէն փոխանոր-
դին վերոյ յիշեցեալ վանքի Առաջնորդին,
և երիս Աւագ քահանայի, և երիս նշանաւոր
աւն բնակող 'ի Ջուղայ, եթէ նոքայ եօթն
անձամբ միասին ուխտ տուն կառավարչաց որ-
բոց հայոց ։

Այլ անդրադարձն եթէ տէր մի՛ արաս-
ցէ Ջուղու, բնակաւորքն լինիցին նոյնպէս որ-
պէս այժմոյս կան կողոպտողք, պահանջողք և
այլն յայնժամ և ամենայն ժամանակի անխրաւա-
բար կառավարութեն բնակաւորաց Ջուղայու,
'ի վեր յիշեցեալ գլուխ դրամն որոք քանա-
կութեամբ որ 'իցէ կալով մնացէ վաշխիւ յիւ-
րաքանչ տեղի իւրոյ, մի միայն տարեկան վաշ-
խն տայցեն սրբոյ վանքին ։

Զոր

Զորորդ՝ վասն որոյ պատուիրեմ ամենայն վարդապետաց, կրօնաւորաց, 'ի սրբոյ Աթոռին սրբոյն Յովսեփայ՝ և ամենայն եթէ վիճակաւոր և եթէ անցաւոր քահանայից որ գտանիցէք 'ի հնդիկս, պարտ է ձեզ հնազանդիլ մերոյ այս հրամանիս, առ 'ի հաստատութիւն բանիս ստորագրեցի 'ի սմին ձեռամբ իմով և իշխանական կնքով կնքեցի այսօր մադրասումս օգոստոսի ամսոյ քսան Յամի Տեառն փրկչին մերոյ ռէճղգ ։

## ՎԵՐՋ